ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2017

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից 2016 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2016 թվականի ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2016 թվականին Կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 14.01.2016թ. N 131-Ն որոշմամբ հաստատված հավելվածներով ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների՝ Կոմիտեին վերաբերող (Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների N 1 հավելվածի 56-րդ և 57-րդ կետեր և N 2 հավելվածի 30-րդ, 31-րդ և 32-րդ կետեր) պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ և իրականացվել են մամուլի ասուլիսներ:

Ջրային տնտեսության ոլորտում ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ 2016 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2014թ. N883-Ն և N888-Ն որոշումների 5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (որպես միասնական գույքային համալիր) օգտագործման իրավունքը 2017թ. հունվարի 1-ից վարձակալությամբ փոխանցվել է մեկ կառավարչի՝ 15 տարի ժամկետով:

Վարձակալի ընտրության գործընթացը կազմակերպելու նպատակով մրցութային կարգով ընտրված մրցութային փաթեթը պատրաստող խորհրդատվական կազմակերպություն (Անցումային խորհրդատու) և աուդիտ իրականացնող (Տեխնիկական աուդիտի խորհրդատու) և միջազգային խորհրդատվական կազմակերպություններն ավարտել են իրենց աշխատանքները, իսկ Գույքի վերագնահատման և գրանցման խորհրդատուն աշխատելու է մինչև 2017 թվականի փետրվարի 1-ը:

Խմելու ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալությամբ հանձնելու (վարձակալի ընտրության) մրցութային գործընթացն ապահովելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 10.03.2016 թվականի <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> փակ բաժնետիրական ընկերությունների

կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված նախարարակավորման ընթացակարգի արդյունքներին և գնման ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու և նախարարակավորված մասնակիցների ցանկը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության N271-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 27.10.2016թ. նիստի <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը վարձակալության հանձնելու գործընթացի շրջանակում անցկացված գնման ընթացակարգի արդյունքներին և ստորագրվելիք վարձակալության պայմանագրի նախագծին հավանություն տալու մասին>> N43 արձանագրության քաղվածքով հավանության է արժանացել <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲԸ-երի կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի շրջանակում անցկացված ՀՀԳՆՋՏՊԿ-ՄԵԾՁԲ-N 15/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքները՝ գնման ընթացակարգի հաղթող ճանաչելով <<Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ>> կոմանդիտային բաժնետիրական ընկերությանը և վարձակալության պայմանագիրը: 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի և <<Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ>> կոմանդիտային բաժնետիրական ընկերության և <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է վարձակալության պայմանագիր:

Հիմնվելով կատարված բարեփոխումների ձեռքբերումների վրա և ընդլայնելով բարեփոխումների շրջանակները՝ այս գործընթացներով դրվել է ՀՀ կառավարության հավանությանն արժանացած խմելու ջրի ռազմավարության <<երկրորդ սերնդի>> բարեփոխումների սկիզբը:

2. Ոռոգում-ջրառ իրականացնող <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> և <<Ախուրյան-Արաքս-ջրառ>> փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 37 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 101.214 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի N33-18 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը, որի բաղադրիչներն ուղղված են նաև նոր ջրամբարների կառուցմանը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների արդիականացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների հետ առավել թափանցիկ հարաբերությունների ներդրմանը:

Ոռոգման ջրի համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության և կայունության բարելավման նպատակով, ինչպես նաև ամրապնդելով ընթացիկ ծախսածածկման անցնելու նախադրյալները, ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N1207-Ա որոշմամբ <<Ախուրյան-Արաքս-ջրառ>> և <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ-ները վերակազմավորվել են: Վերջինիս նպատակն է բարձրացնել ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների ծախսերի կրճատման, ինչպես նաև ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը, ինչպես նաև կրկնվող գործառույթներով և մասամբ ծանրաբեռնված հաստիքների կրճատումը:

Ոռոգման համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև վերահսկողությունն ուժեղացնելու նկատառումներով, ընդունվել է ՀՀ կառավարության 20.01.2016թ. <<ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N1678-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N22-Ն որոշումը: ՋՕԸ-երի

գործունեության համակարգումը տարբեր գերատեսչությունների և մասնագետների ներգրավմամբ իրականացվելու է մեկ մարմնի միջոցով և վերջինիս հնարավորություն է տրվելու առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելու ՀՀ պետական բյուջեից ՋՕԸ-երին տրամադրվող ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը:

Ոռոգման ծառայությունների արդյունավետության բարձրացման, ծառայությունների մատուցման շարունակականության ապահովման ու մատչելիության պահպանման, պետական սեփականություն համարվող ոռոգման համակարգերի արդյունավետ շահագործման, պահպանման, բնականոն ջրամատակարարումն ապահովելու նպատակով 37 ՋՕԸ-եր վերամիավորվել են և ներկայումս գործում են 14 ՋՕԸ-եր:

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N161-Ա հրամանով մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA ջրաչափական համակարգի սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: Վերը նշված սարքավորումների տեղադրումն ու շահագործումը (համապատասխան փուլերով) իրականացնելու արդյունքում հիմնականում կանոնակարգվելու են ոռոգման ջրի հաշվառման և համակարգի շահագործման հետ կապված խնդիրները: Համակարգի ծախսերի զգալի նվազեցումից բացի, հնարավորություններ կստեղծվեն նաև կենտրոնացնել ՋՕԸ-երի հաշվապահական հաշվառման և գնումների գործընթացները:

ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում կադաստրային ոռոգելի հողատարածքները կազմել են շուրջ 200 հազ. հա, որից 2016 թվականին փաստացի ոռոգվել է 101.214 հազ. հա:

2016 թվականի ոռոգման շրջանում ջրի պաշարների և ջրապահանջարկի, ինչպես նաև ջրօգտագործողների արձագանքների վերլուծությունը փաստում է, որ ջրօգտագործողների կողմից հայտերով ներկայացված ջրապահանջը հիմնականում բավարարվել է: Ընթացիկ տարվա ոռոգման շրջանի արդյունավետության մասին է վկայում նաև ոռոգման շրջանում կոմիտեի թեժ գծով ստացված բողոքների քանակի և բովանդակության վերլուծությունը:

3. Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար 2016 թվականի ընթացքում կատարվել են՝ վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ 109.16 տ, երեսարկի կառուցում՝ 193 գծմ, ցեմենտային և ստուգիչ լցամղում՝ 2132 քմ, ինչպես նաև հատակի կառուցման աշխատանքներ՝ 37 քմ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը: Ծրագրի կատարողականը կազմում է 99.66%, ներդրումների չափը 2016 թվականին կազմել է 1109762.203 հազար դրամ, իսկ ծրագրի իրականացման ընթացքում շինարարության տեխնիկական հսկողության և <<Արփա-Սևան>> թունելների ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի աջակցման ծառայությունների արժեքը 2016 թվականին կազմել է 22528.2 հազար դրամ:

Ծրագրի ավարտով պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1171-Ն որոշմամբ, դադարեցվել է <<Արփա-Սևան>> թունելների ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի գործունեությունը:

4. ***Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս,*** որ 2016 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2016 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 21,83 մլրդ դրամ՝ 2015 թվականի 21,52 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 309 մլն դրամ (գրաֆիկ 1):

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2016 թվականին կազմել է 94.69 %, իսկ ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2016 թվականին կազմել է 77.61 %:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.96 մլրդ դրամ՝ 2015 թվականի 17.64 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 314 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.87 մլրդ դրամ:

Գրաֆիկ 1. 2005-2016թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)



Գրաֆիկ 2. 2005-2016թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ (մլն կՎտ.ժամ):



Խմելու և ոռոգման ոլորտում ապահովվել է էլեկտրաէներգիայի խնայողություն շուրջ 51.96 մլն կՎտ.ժամով կամ պակաս է ծախսվել շուրջ 1.4 մլրդ դրամ:

Խմելու ջրամատակարար կազմակերպությունների մասով ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

5. 2016 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպություններով ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 6.02 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

6. 2016 թվականի ընթացքում <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը (գրաֆիկ 3):

Գրաֆիկ 3. 2009-2016թթ. խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների ջրամատակարարման միջին տևողության վերաբերյալ



7. 2016 թվականին Սևանա լճից ՀՀ կառավարության 02.06.2016թ. N558-Ա որոշման համաձայն բաց է թողնվել 167.743 մլն մ3 ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 120.7 մլն մ3 ջրաքանակ: Սևանա լճի մակարդակը 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900,48 մ: Սևանա լճից ջրի բացթողումը սկսվել է 2016 թ. հունիսի 7-ից և դադարեցվել է 2016թ. սեպտեմբերի 9-ին:

8. Կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված են 849888 հատ ջրաչափական սարք, որը 2015 թվականի համեմատությամբ ավել է 25387 հազարով (գրաֆիկ 4): Ջրաչափությունը կազմում է 94.3 %:

Գրաֆիկ 4. 2007թ. հունվարի 1-ի դրությամբ և 2007-2016թթ. խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման բաժանորդների մոտ տեղադրված ջրաչափերի վերաբերյալ:



9. 2016 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 291.25 կմ խմելու, կոյուղու և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

10.Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

Վեդու ջրամբարը նախատեսվում է կառուցել ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը:

Վեդու ջրամբարի համար <<Վեդու ջրամբարի և նրա ոռոգման տարածքների տեխնիկա-տնտեսական ուսումնասիրություն և Վեդու ջրամբարի շինարարության մանրամասն նախագծի պատրաստում>> խորհրդատվական ծառայությունների իրականացման համար ստորագրվել է պայմանագիր “ARTELIA EAU & ENVIRONMENT” (Ֆրանսիա) – <<SHER Ingenieurs- Conseils>> s.a. (Բելգիա) համատեղ “JRTUC” ՍՊԸ-ը (որպես ենթախորհրդատու, Հայաստան) ՀՁ-ի հետ, 2013թ. նոյեմբերի 25-ին: <<Վեդիի ջրամբարի շինարարության մանրամասն նախագծի պատրաստում>> խորհրդատվական ծառայությունների մեկնարկը սահմանվել է 2015 թվականի հունվարի 12-ը և ներկայումս պատվարի և օժանդակ կառույցների աշխատանքներն ավարտված են:

Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն իր մեջ ներառում է.

1. Վեդու 29 մլն խոր.մ ընդհանուր ծավալով պատվարների և օժանդակ կառուցվածքների կառուցում (Փաթեթ N1),
2. Վեդի և Խոսրով գետերի վրա ջրառ հանգույցների կառուցում (Փաթեթ N2),
3. ջրի փոխադրման համակարգի (շուրջ 11 կմ երկարությամբ) կառուցում (Փաթեթ N3 և N4՝ յուրաքանչյուր փեթեթում ներառյալ երկու լոտեր),
4. ոռոգման համակարգի (37 կմ երկարությամբ) կառուցում՝ ջրամբարից մինչև ոռոգման ցանցի գլխամասային հանգույցներ (Փաթեթ N5 և N6՝ յուրաքանչյուր փաթեթում ներառյալ երկու լոտեր),
5. ոռոգման ցանցի (ջրամբարի իշխման տակ գտնվող 3200 հա հողատարածքների ոռոգման ցանցի վերականգնում) վերակառուցում,
6. նոր տեխնոլոգիաների տեղադրում փորձնական տարածքներում՝ կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգեր:

Վեդու պատվարի, ջրառ հանգույցների, ջրի փոխադրման համակարգի և ոռոգման համակարգի նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները սկսվել են 2015 թվականի հունվարից և ամբողջությամբ ավարտվել 2016 թվականի օգոստոսին:

Վեդու պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման մրցութային փաստաթղթերը խորհրդատուի կողմից պատրաստվել և ներկայացվել են 2015 թվականի դեկտեմբերին, որի հիման վրա անցկացվել է շինարարության նախաորակավորման մրցույթ: 2016 թվականի մայիսի 17-ին <<Առաջարկներ ներկայացնելու հրավերն>> և Մրցութային փաստաթղթերը տրամադրվել են բոլոր 4 նախաորակավորված ՀՁ-ներին: <<Մրցութային Առաջարկների Գնահատման Ձեկույցն ու Պայմանագրի Շնորհման Առաջարկությունը>> ներկայացվել է ՁՖԳ՝ ուսումասիրության և հաստատման: Հետագայում հաղթող կազմակերպության հետ ստորագրվել է պայմանագիր:

Վերջին երկու բաղադրիչների՝ ոռոգման ցանցի վերակառուցման և նոր տեխնոլոգիաների տեղադրման, մանրամասն նախագծային աշխատանքները կսկսեն 2017 թվականին:

Մյուս հինգ փաթեթների (փաթեթ N2-N6) համար մրցութային գործընթացը սկսվել է 2016թ. օգոստոսի 22-ին: Բոլոր ստացված մրցութային առաջարկներն ուսումնասիրվել և գնահատվել են գնահատող հանձնաժողովի կողմից՝ Խորհրդատուի (Արտելիա) հետ համատեղ: <<Մրցութային առաջարկների գնահատման զեկույցներն ու Պայմանագրի շնորհման առաջարկությունները ներկայացվել է Զարգացման ֆրանսիական գործակալության ուսումնասիրությանը և հաստատմանը:

Վեդու 29 մլն խոր.մ ընդհանուր ծավալով ջրամբարի կառուցմամբ հնարավորություններ կստեղծվի <<Վեդի>> և <<Արարատ>> ՋՕԸ-երի սպասարկման տակ գտնվող մոտ 7525 հա հողատարածքների հուսալի և անխափան ոռոգման իրականացումը (<<Վեդի>> և <<Արարատ>> ՋՕԸ-երի սպասարկման տակ են գտնվում շուրջ 15251 հա հողատարածքներ, ջրօգտագործողների թիվը կազմում է 18453), ինչպես նաև

- կավելանան ոռոգելի հողատարածքներն ավելի քան 1116հա,
- շահագործումից դուրս կգան թվով 13 պոմպակայաններ, որոնց սպասարկման տակ են գտնվում մոտ 9 համայնքների 2900 հա հողատարածքներ, իսկ ինքնահոս համակարգի անցնելու արդյունքում տարեկան կտնտեսվի շուրջ 19մլն կվտ/ժամ էլեկտաէներգիա:
- ոռոգման ցանցի վերակառուցման և ցանցի արդիականացման արդյունքում կկրճատվեն ոռոգման ջրի կորուստները, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերը: Համակարգի կորուստները ներկայումս գնահատվում են 40-50% սահմաններում: Ծրագրի իրականացման արդյունքում ցանցի կորուստները կկրճատվեն մինչև 15-20%:
- <<Վեդի>> և <<Արարատ>> ՋՕԸ-երի շուրջ 500հա փորձնական հողատարածքներում նախատեսվում է կիրառել ոռոգման նոր տեխնոլոգիաներ (կաթիլային և անձրևացում): Նոր տեխնոլոգիաների փորձնական տարածքներում տեղադրման արդյունավետության արդյունքը՝ հիմնավորում կլինի տարածաշրջանի մյուս ֆերմերների համար՝ անցնելու նոր ոռոգման եղանակի՝ տնտեսելով ջրային ռեսուրսը և բարձրացնելով բերքատվության որակը:
- Սևանա լճից ոռոգման նպատակով ջրապահանջարկի բեռը կնվազի շուրջ 18 մլն խոր.մ:

Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994 թվականին. իրականացվել է միայն 20մ բարձրությամբ պատվարի մարմնի լիցք: Կիսավարտ պատվարը ներկայումս իրենից վտանգ է ներկայացնում, քանի որ թունելի փլուզման կամ մեծ վարարման դեպքում կիսակառույց ջրամբարում արտահոսք կլինի պատվարի վրայով՝ ճեղքելով պատվարը: Դա մեծ վնասներ կհասցնի պատվարի ստորին բիեֆում գտնվող համայնքներին, այդ թվում կծածկի Գյումրի քաղաքի մի մասը, որի համար Կոմիտեն իր 10.01.2017թ. N01/07/05-17 գրությամբ խնդրանքով դիմել է ՀՀ վարչապետին Կումայրի գետի թունելին հարող հատվածի վերականգնումը հակահեղեղային միջոցառումների ծրագրում ընդգրկելու համար:

1-ին փուլով՝ <<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> նախատեսվում է կառուցել ընդհանուր 25 մլն խոր.մ ծավալով ջրամբարի պատվարը: 25 մլն խոր.մ ծավալով ջրամբարը կբարձրացնի Շիրակի ջրանցքի իշխման տակ գտնվող շուրջ 12325հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով, անխափան և հուսալի ոռոգում կապահովի շուրջ 2280 հա հողատարածքների համար՝ տարեկան խնայելով 1,3 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա:

Ներկայումս ընթանում են Կապսի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները, մասնավորապես՝ երկրաբանական հետազոտությունները, գեոդեզիական ուսումնասիրությունները, սեյսմիկական և գեոֆիզիկական հետազոտություններն ու մասնակի նախագծային աշխատաքները: Մանրամասն նախագծային աշխատանքները կավարտվեն

2018 թվականի փետրվար ամսին, որից հետո կսկսվի շինարարական մրցութային գործընթաց: Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2018 թվականի հունիս ամսին՝ շուրջ 3 տարի տևողությամբ:

Կապսի ջրամբարի կառուցման <<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KfW) վարկային միջոցներով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ՝ 60 մլն Եվրո ընդհանուր արժողությամբ:

Ծրագրի իրականացման շրջանակներում 2012 թ. նոյեմբեր ամսին KfW բանկի և ՀՀ կառավարության հետ քննարկվել է նաև 2-րդ փուլի վարկային համաձայնագրի հանձնառությունն, որի համաձայն 18.5 մլն Եվրո արժողությամբ վարկային համաձայնագիրը պետք է վավերացվի մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: 2016 թվականի օգոստոսի 23-ին KfW բանկի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացվել 18.5 մլն Եվրո արժողությամբ վարկային համաձայնագրի նախագիծը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

<<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 2>> նախատեսվում է Կումայրի ոռոգման թունելի, ջրի տեղափոխող ինքնահոս խողովակաշարի և շուրջ 750 հա ոռոգելի տարածքներում ոռոգման ցանցի կառուցման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների սարքավորումների ձեռքբերման և տեղադրման համար:

Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նպատակով 2014թ. հունիսին սկսվել են նախնական իրագործելիության ուսումնասիրություններն՝ երկու փուլով, որոնք արդեն ավարտվել են: Ջրամբարի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունն ավարտվել է, որի վերաբերյալ վերջնական հաշվետվությունը 2016 թվականի նոյեմբեր ամսին ներկայացվել է Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA): Նախնական ուսումասիրությունների համաձայն պատվարի նախագծային աշխատանքներն իրականացվելու են 95 մլն. խ.մ. ընդհանուր ծավալով, որի համար նախնական ներդրումային ծախսերը կազմում են մոտ 220 մլն ԱՄՆ դոլլար՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը:

Ջրամբարի կառուցման շնորհիվ հնարավոր կլինի անխափան ոռոգել 28 համայնքների շուրջ 12347 հա հողատարածքներ, իսկ ինքնահոս համակարգի անցնելու արդյունքում տարեկան կտնտեսվի մոտ 28.56 մլն կվտ/ժամ էլեկտաէներգիա:

Ծրագրի շրջանակներում նախապատրաստական հետազոտության միջանկյալ հաշվետվության մեջ ծրագրի տնտեսական եկամտաբերության ներքին նորմայի (ՏԵՆՆ, EIRR) ցուցանիշը գնահատվել էր 11%՝ առանց հաշվի առնելու Սևանա լճի պահպանման դրական ազդեցությունը, իսկ այն հաշվի առնելու պարագայում՝ 15%: Նախապատրաստական հետազոտության վերջնական հաշվետվության նախագծում վերը նշված ցուցանիշները համապատասխանաբար գնահատվել են 3,68% և 5,72%:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության համար ջրամբարի կառուցման կարևորությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն հարցի կարգավորման համար քննարկումներ է անցկացնում:

Մաստարայի ջրամբարը նախատեսվում է կառուցել ՀՀ Արմավիրի մարզում՝ Սելավ Մաստարա գետահովտում: Ջրամբարը նախատեսվում է լցնել Սելավ Մաստարա և Ախուրյան գետերի ազատ հոսքով: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն խոր.մ ընդհանուր ծավալով, 4384 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակի բարձրացման նպատակով, որոնք տեղաբաշխված են Արմավիրի մայր ջրանցքի 27-րդ կիլոմետրից հետո գտնվող համայնքներում՝ Հացիկ, Մյասնիկյան, Լուկաշին, Նորապատ և Նորավան:

<<Մաստարայի ջրամբարի կառուցման տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության և նախնական նախագծի պատրաստման>>, <<Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվության մշակում Մաստարայի ջրամբարի կառուցման

ծրագրի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության փուլի համար>> և <<Մաստարայի ջրամբարի կառուցման ծրագրի վերաբնակեցման քաղաքականության շրջանակի պատրաստման>> Առաջադրանքի պայմանները ներկայացվել են ՀԲ-ի հաստատմանը, այժմ այն հաստատման փուլում է: Հաստատումից հետո կսկսվի մրցութային գործընթաց:

Որպես ծրագրի իրականացման արդյունք՝ ակնկալվում է ունենալ 3794 հա փաստացի ոռոգվող տարածքների ջրապահովման մակարդակի բարձրացում, լրացուցիչ 590 հա ներկայումս չմշակվող ոռոգելի տարածքների ջրապահովում և շուրջ 2.1 մլն.կվտ.ժ էլեկտրաէներգիայի տարեկան տնտեսում:

11. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով իրականացվել են՝

ա) 136.7 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ:

բ) Արարատյան դաշտում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2016 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

2017 թվականի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում կարևորվում են հետևյալ հիմնական աշխատանքների իրականացումը՝

1. <<Վեոլիա Ջուր>>, <<Ջրառ>> և <<Մելիորացիա>> փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

2. Խմելու ջրի ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման արդյունավետության բարելավում, վարձակալի պայմանագրային պարտավորությունների վերահսկման մեխանիզմների ներդրում:

3. <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությունում վարձակալի հետ կնքված պայմանագրով 2017 թվականի համար նախատեսված ցուցանիշների կատարման ապահովում, անկախ տեխնիկական աուդիտի ընտրության և ներգրավվածության ապահովում, նոր վարձակալի կողմից Պայմանագրի պահանջներին համապատասխան Կոմիտե ներկայացված պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) հաստատում, Վարձակալի հետ կնքված վարձակալության պայմանագրի 2017թ. համար նախատեսված հիմնական կատարողական ցուցանիշների մեթոդաբանության մշակում և ներդրում, հաշվետվությունների ընդունման, գնահատման և արձագանքման համակարգի ներդրում:

4. Ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքներից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման ներդրումային աշխատանքների իրականացում:

5. Կոյուղու մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստում և իրականացում:

6. Ոռոգման ջրանցքների, ջրատարների և պոմպակայանների վերականգնում և նորոգում, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցում:

7. Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստման և ջրամբարաշինական ծրագրերի իրականացման ապահովում:

8. Ոռոգման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, մասնակցային կառավարման ամրապնդում, ջրօգտագործողների հետ առավելագույնս թափանցիկ և նոր որակի հարաբերությունների ներդրում:

9. Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովում: